Արձանագրություն N 3

ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/15 ծածկագրով <<Երևանի N 1 տուն-ինտերնատ>> պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում անկողնային խնամք ստացող անձանց սպասարկման նպատակով կառուցված նոր մասնաշենքի հարակից տարածքների բարեկարգման և կանաչապատման, ինժեներական համակարգերի կառուցման, պարսպի վերականգնման, շենքային տարածքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

11 սեպտեմբերի 2017թ.
Ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Մաթևոսյան / գնահատող /
Ա.Քոչարյան /գնահատող/
Ա.Հովսեփյան / բացող /
Ն.Մանուկյան / բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն.Հարությունյան

Բացակայում էր
հանձնաժողովի նախագահ՝ Մ.Սարիբեկյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանի մասին և գնման ընթացակարգի N 2 արձանագրության մեջ փոփոխություն կատարելու մասին

(Ս.Մաթևոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից պահանջվող եզրակացությունը ստացվել է ժամկետից շուտ՝ գնահատող հանձնաժողովը որոշում է սույն ընթացակարգի N 2 արձանագրության 5.1 կետում նշված <<սեպտեմբերի 12-ին ժամը 12:00-ին>> բառերը փոխարինել <<սեպտեմբերի 11-ին ժամը 15:00-ին>> բառերով:

- Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ս.Մաթևոսյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետը և գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Հազարաշեն>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ս.Մաթևոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<Հազարաշեն>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս.Մաթևոսյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, գնումների կազմակերպման բաժնում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահող՝ ---------- Ս.Մաթևոսյան

Անդամ՝ ---------- Ա.Քոչարյան

---------- Ա.Հովսեփյան

---------- Ն.Մանուկյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն.Հարությունյան